ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-04

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 4 նիստի

19-ը փետրվարի 2024թ.

Ս.թ. փետրվարի 19-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 4-րդ նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հավակնորդների հայտերի հաստատում կամ մերժում,
2. Ազգային ժողովի նախագահի կողմից 16.01.2024թ. հայտարարված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթի չկայացած համարում,
3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության նոր մրցույթի հայտարարում:

Խորհրդի բոլոր հինգ անդամները մասնակցում էին նիստին: Նիստը վարում էր՝ Արթուր Հովսեփյանը:

Նիստին մասնակցում էր նաև ԱԺ աշխատակազմից Դիաննա Աթոյանը՝ նիստի արձանագրումն ապահովելու համար:

Օրակարգի 1-ին հարց	Խորհուրդը ուսումնասիրեց և արձանագրեց, որ Նվարդ Վարդանյանի ներկայացրած փաստաթղթերը ամբողջական են և համապատասխանում են Խորհրդի 11.01.2024թ. որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց հաստատել Ն. Վարդանյանի հայտը:* *Կողմ 5, դեմ 0*
Օրակարգի 1-ին հարց	Խորհուրդը ուսումնասիրեց և արձանագրեց, որ հավակնորդ Սարգիս Միրզոյանի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում Խորհրդի 11.01.2024թ. որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը որոշեց Սարգիս Միրզոյանի հայտի ընդունումը մերժել:* *Կողմ 5, դեմ 0*

Օրակարգի 2-րդ հարց	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթին մասնակցելու հայտ էր ներկայարել երկու հավակնորդ: Հավակնորդ Ս.Միրզոյանի հայտի ընդունումը մեժվել է վերջինիս ներկայացրած փաստաթղթերի Խորհրդի 11.01.2024թ. որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու հիմքով: Ազգային ժողովի նախագահի կողմից 16.01.2024թ. հայտարարված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների երկու թափուր պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթի համար առկա է միայն մեկ հավակնորդ ում հայտը ընդունվել է,ուստի առաջարկվեց Ազգային ժողովի նախագահի կողմից 16.01.2024թ. հայտարարված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթը համարել չկայացած:
Խորհրդի որոշումը	*Հաշվի առնելով, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու հավակնորդների թիվը պակաս է թափուր տեղերի քանակից, ուստի խորհուրդը որոշեց Ազգային ժողովի նախագահի կողմից 16.01.2024թ. հայտարարված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթը համարել չկայացած:* *Կողմ 5, դեմ 0*
Օրակարգի 3-րդ հարց	Հաշվի առնելով, որ Խորհուրդը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամիների թափուր պաշտոններում մրցույթին մասնակցելու հավակնորդների թիվը թափուր տեղերի քանակից պակաս լինելու հիմքով որոշել է Ազգային ժողովի նախագահի կողմից 16.01.2024թ. հայտարարված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության մրցույթը համարել չկայացած, ուստի առաջարկվեց ղեկավարվել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 10.4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և անցկացնել նոր մրցույթ:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը որոշեց հայտարարել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններում թեկնածուների ընտրության նոր մրցույթ:* *Կողմ 5, դեմ 0*

Նիստը վարող՝ Ա. Հովսեփյան

Նիստի քարտուղար՝ Դ.Աթոյան